

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Վերածննդի և Նոր դարի  
Եվրոպայի մշակույթի  
պատմություն**

*Դասընթացի ծրագիր*

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2016

ՀՏԴ 008(091)

ԳՄԴ 71

Վ 490

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ պատմության ֆակուլտետի  
գիտական խորհուրդը*

Կազմող՝

ԵՊՀ պատմության ֆակուլտետի  
մշակութաբանության ամբիոնի ասիստենտ  
պ.գ.թ. **Յու. Յու. Անտոնյան**

Վ 490 Վերածննդի և Նոր դարի Եվրոպայի մշակույթի պատմություն:  
Դասընթացի ծրագիր/ Յու. Յու. Անտոնյան: -Եր., ԵՊՀ հրատ.,  
2016, 40 էջ:

ՀՏԴ 008(091)

ԳՄԴ 71

ISBN 978-5-8084-2099-1

© ԵՊՀ հրատ., 2016

© Կազմողի համար, 2016

## **Դասընթացի նպատակը**

Ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ Վերածննդի և Նոր դարաշրջանների Եվրոպական երկրների մշակութային համակարգերի և մշակութային գործընթացների վերաբերյալ պատմական մարդաբանության մեթոդների կիրառությամբ:

### ***Դասընթացի չափորոշիչները՝***

#### **Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

##### *Գիտելիք և իմացություն*

- Վերածննդի և Նոր դարաշրջանի եվրոպական մշակույթի հիմնական գործընթացների վերաբերյալ:
- Դասական և ժամանակակից գիտության մեջ գոյություն ունեցող Վերածննդի և Նոր դարի մշակույթի պատմության վերաբերյալ հիմնական գիտական հայեցակարգերի մեկնաբանությունների և ուսումնասիրման մեթոդների մասին:

##### *Ունակ կլինի*

- Տարբերակել ուսումնասիրվող դարաշրջանի հետ կապված հիմնական մշակութային գործընթացները և կատարել նրանց գիտական մեկնաբանումը:
- Կողմնորոշվել Եվրոպայի մշակույթի պատմությանը վերաբերող հիմնական ժամանակակից գիտական տեսությունների միջև:
- Օգտագործել պատմական մարդաբանության մեթոդները մասնավոր թեմաների ուսումնասիրման ժամանակ:

## **Դասընթացի կառուցվածքը, մեթոդոլոգիան ու թեմաների նկարագրությունը**

Դասընթացը ենթադրում է 96 ժամ՝ 72 դասախոսություններ, 24 սեմինար-քննարկումներ:

### **Դասավանդման մեթոդոլոգիա՝**

Դասընթացի դասավանդման ընթացքը կազմակերպվում է հետևյալ կերպ՝

1. Դասախոսություններ, որոնք բաղկացած են դասախոսի կողմից տեսական և նկարագրական նյութի քննական ներկայացումից, ներառելով յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ կազմած Power Point պրեզենտացիաներ, ինչպես նաև հարցերի ու պատասխանների սեսիայից (հարցերը տրված են սույն ծրագրի վերջում):

2. Սեմինարներ, որոնց ընթացքում ուսանողները ներկայացնում են կուրսի համար նախատեսված պարտադիր և լրացուցիչ գրականությունը և քննարկում այն՝ դասախոսի ղեկավարմամբ:

3. Գիտելիքի ստուգում՝ միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննության տեսքով:

### **Քննման եղանակները՝**

1. Գրավոր հարցում՝ միջանկյալ քննությունների տեսքով:

2. Բանավոր հարցում՝ սեմինարների ընթացքում նյութի պարտադիր ներկայացման միջոցով:

3. Բանավոր հարցում՝ վերջնական բանավոր քննության տեսքով:

# **Թեմաների բովանդակությունը**

## **Վերածննդի դարաշրջան**

### **Թեմա 1. Վերածննդի մշակութային հարացույցը:**

- Վերածնունդը որպես նոր մշակութային դարաշրջանի սկիզբ. Դարաշրջանի հիմնական չափորոշիչները:

- Ժամանակակից գիտական պատկերացումները Վերածննդի ելքյան մասին: Միջնադարի և Վերածննդի ժառանգականության և սահմանների խնդիրը:

- «Վերածնունդ» եզրը, նրա առաջացումն ու իմաստային դիապագոնը: Վազարիի, Միչլեի և Բուրքհարդտի դերակատարումը «Վերածնունդ» եզրի և հասկացության ձևավորման մեջ: Վերածննդի մշակույթի ուսումնասիրման գիտական ավանդույթները: Բուրք-հարդտի կառուցած տեսությունը և նրա քննադատությունը, արդի գիտական հայացքները: Լը Գոֆֆի «երկարատև միջնադարը» և Բըրք-ի «Վերածննդի գիտական նարատիվի» գաղափարները:

- Վերածննդի ընդունված արվեստաբանական պարբերացումը: Նախավերածնունդ (12-14 դդ.), Վաղ Վերածնունդ (14-15 դդ.), Բարձր Վերածնունդ (15 դ. վերջ – 16 դ. 20-40-ական թթ.), Ուշ Վերածնունդ (16 դ.): Հյուսիսային Վերածննդի զարգացումն ու ճգնաժամը:

### **Թեմա 2. Իտալական և Հյուսիսային Վերածննդի պատմամշակութային բնութագրերը:**

- Իտալական Վերածննդի առանձնահատկությունները: Մշակութային միջավայրն ու գործող անձինք:

- Իտալիայի քաղաքական, տնտեսական և սոցիոմշակութային զարգացումը 12-16 դդ. Իտալիայի դերը միջազգային քաղաքական և տնտեսական ասպարեզում:

- Իտալական քաղաքն ու քաղաքային միջավայրը (Վենետիկ, Ֆլորենցիա, Միլան):

- Քաղաքական և մշակութային կլիման: Սենյորներն ու մտավորականները: Հովանավորության մեխանիզմները: Կրթական համակարգը:

- Կրոնական միջավայրը: Պապականությունը: Կրոնական միաբանությունները (Ֆրանցիսկյան և Դոմինիկյան):

- Ֆլորենցիայի մշակութային ֆենոմենի պատճառները:

- Վերածննդի այլ կենտրոններ և դրանց առանձնահատկությունները (Վենետիկ, Սիլան, Հռոմ):

- Հյուսիսային Վերածնունդ հասկացությունը և առանձնահատկությունները: Հյուսիսային Վերածննդի կրոնական բնույթը: Մշակութային միջավայրը և գործող անձինք: Վերածննդի հյուսիսային կենտրոնները (Նյուրնբերգ, Բրյուզգե, Անտվերպեն):

**Թեմա 3. Վերածննդի դարաշրջանին բնորոշ նշանա-խորհրդադարանական և էթիկա-էսթետիկական մոդելավորող համակարգերը:**

- Անտիկությունը որպես բարձր մշակույթի մոդել: Անտիկության բազմակողմանի վերադարձը էլիտար մշակույթ: Անտիկ թեմաները գեղարվեստում: Անտիկությունը և ժողովրդական մշակույթը: Անտիկ թեմաներ գրականության և արվեստի մեջ: Կաթոլիկությունը և անտիկության «պաշտամունքը»: Քրիստոնեական և անտիկ արժեքների ինտեգրման գործընթացը:

- Վերածննդյան մշակույթի լեզուները: Լատիներենի «պաշտամունքը»:

**Թեմա 4. Հումանիզմը և Վերածննդի փիլիսոփայական և կրթական համակարգերը:**

- Հումանիզմը որպես Վերածննդին բնորոշ աշխարհահայացք և համակարգ: Studia Humanitatis.

- Վերածննդի դարաշրջանի փիլիսոփայական կատեգորիաները և հարացույցերը, մշակույթում դրանց մոդելավորող դերը:

- Ժամանակի և պատմության վերաբերյալ պատկերացումների փոփոխումը:

- Կրթական մոդելի փոխակերպումը: Համալսարանների միջ-նադարյան մոդելի անկումը, «ակադեմիա»-յի վերադարձը: Գիտական և փիլիսոփայական դիսկուրսի զարգացումը:

- Մարդը և մարդու արժեքը: Մարդը որպես սիմվոլիկ համակարգերի մոդելավորման աղբյուր: Մարդկային կյանքն ու ճակատագիրը (Ֆորտունան): Բանականությունն ու հիմարությունը (Էրազմի «Հիմարության գովերգը», Բրանտի «Հիմարների նավը»):

- Վերածննդի էքստոլոգիան և ֆուտուրոլոգիան: Դանթեն և Աստվածային կատակերգությունը: «Ուտոպիաներ» (Մոր, Կամպանելլա, Բեկոն):

### **Թեմա 5. Գեղագիտական և գեղարվեստական հեղափոխությունը**

- Նոր բարոյա-գեղագիտական համակարգի ստեղծումը:

- Նոր գաղափարներ, սկզբունքներ և կատարողական մոտեցումներ արվեստում:

- Վերածննդի արվեստը որպես նշանային համակարգ: Վերածննդի դարաշրջանի գեղարվեստի առանձնահատկությունները:

- Հաստոցային գեղանկարչության տարածումը և գեղարվեստի աշխարհիկ ժանրերի առաջացումը: Արվեստի «կենցաղացումը»:

- Մարդը որպես արարած և մարդու մարմինը Վերածննդի դարաշրջանում: Մարմնի իդեալական համամասնությունները: Գրոտեսկային մարմնի գաղափարը (Բոսխ, Բրյոյգել, Ռաբլե):

- Սիրո գաղափարը և էրոտիզմը Վերածննդի մշակութային համակարգում:

### **Թեմա 6. Անհատը մշակույթի համատեքստում:**

- Անհատականացման գործընթացի սկիզբն ու չափորոշիչները:

- Վերածննդի դարաշրջանի անհատների դերը նոր մշակութային միջավայրի և նոր աշխարհակալման ձևավորման գործում: Նոր տիպի մտավորականության հանդես գալը:

- Արվեստագետի (նկարչի, ճարտարապետի, քանդակագործի, երաժշտի) նոր կարգավիճակի ձևավորումը՝ արհեստից դեպի արվեստ, արվեստից դեպի մասնագիտացում:

- Բազմակողմանի զարգացած անհատը կամ «տիտանիզմի» երևույթը որպես Վերածննդի դարաշրջանի մշակութային առանձնահատկություններից մեկը:

**Թեմա 7. Տարածության կազմակերպման նոր սկզբունքներ. Քաղաքաշինությունը և ճարտարապետությունը Վերածննդի դարաշրջանում:**

- Լանդշաֆտի (բնանկարի) մշակութային «բացահայտումը»:
- Քաղաքի նոր դերը և ուրբանացման սկիզբը: Քաղաքային սոցիալական կյանքի և կառուցվածքի փոխակերպումը և քաղաքային տարածության կազմակերպման վերաբերյալ նոր գաղափարների առաջացումը:
- Քաղաքաշինության և ճարտարապետության նոր «լեզուն»:

**Թեմա 8. Վերածննդի դարաշրջանի լեզուները, հաղորդակցման առանձնահատկությունները և ազգային գրականությունների առաջացումը:**

- Դասական լեզուների «վերածնունդը» և լատիներենի մշակութային դերը վաղ Վերածննդի դարաշրջանում:
- Ազգային գրական լեզուների ձևավորումը և նոր տիպի ազգային գրականությունների առաջացումը (Բոկաչչո, Պետրարկա, Շեքսպիր, Դանտե, Լյութեր, Սերվանտես, Ռաբլե):
- Ազնվականության և արքունական հաղորդակցման լեզուները, Վերածննդի «lingua franca»-ն (լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն):



- Վերածննդի պոետիկան և խորհրդաբանությունը: Պոետիկ սիրո ձևափոխումները «ասպետականից» դեպի սիրո «զգացմունքային», էրոտիկ դրսևորումները: Պոեզիայի ազգային դարոցները (Պետրարկա, «Պլեյադներ», Կլեման Սարո, Մարգարիտ Նավառացի): Պոեզիայի դերը արքունական և ձևավորվող ազգային մշակույթներում: Տրակտատներ պոեզիայի մասին:

- Վերածննդի գրականության ժանրային ուղղություններ և դրանց հասարակական իմաստավորումը:

- Վերածննդի ժողովրդական գրականությունը՝ պատումներ Ուլենչպիգելի, Ֆորտունատի, դոկտոր Ֆաուստի մասին: Ժողովրդական գրքի տարածումը:

- Ձեռագիր և տպագիր մշակույթների գոյակցումը: Գրատպության հայտնագործումը և դրա շարժառիթները:

### **Թեմա 9: Վերնախավի երաժշտական և թատերական մշակույթը:**

- Երաժշտության աշխարհիկացման գործընթացի սկիզբը: Երաժշտական ժանրերի և գործիքների զարգացումը:

- Ժողովրդական թատրոնը և դիմակահանդեսը: Միջնադարյան թատրոնի փոխակերպումը:

- Ստացիոնար թատրոնի առաջացումը: Թատերական տարածությունն ու խորհրդաբանությունը:

- Եվրոպական թատրոնի ժանրերը և զարգացման ուղիները:

- Թատրոնի սոցիալական գործառույթները:

### **Թեմա 10. Կաթոլիկությունը Վերածննդի դարաշրջանում և ժողովրդական կրոնական մշակույթը:**

- Ժողովրդական կաթոլիկությունը: Եկեղեցու և կղերականների ժողովրդական ընկալումը: Սրբերի պաշտամունքը: Ուխտագնացությունները:

- Ժողովրդական ծիսական մշակույթը. կրոնական տոնախմբությունները, կարնավալային երթերը: Ֆ. Ռաբլեն և ծիծաղի մշակույթը:

- Կրոնական միաստիցիզմը և կրոնական կյանքի տիպերը: Մահվան, դժոխքի, դրախտի և քավարանի մասին պատկերացումները: Dance macabre («Մահվան պարը»):

- Կաթոլիկության ճգնաժամը, ինստիտուցիոնալ կարծրացումն ու ձևականացումը: Ինդուլգենցիաների և մեսսաների վաճառքը: Աղանդավորական շարժումները:

- Ծիզվիտների միաբանության ստեղծումը: Ի. Լոյոլա: Ինկվիզիցիան որպես կաթոլիկության տոտալիտար գաղափարախոսության իրականացման գործիք: Աուտոդաֆեներ:

- Կախարդությունն ու կախարդների հետապնդումը: «Կախարդներ մուրճը»:

- Վանական մշակույթը:

## **Թեմա 12. Ռեֆորմացիան որպես պատմա-մշակութային երևույթ:**

- Ռեֆորմացիայի սոցիոմշակութային պատճառները և բովանդակությունը:

- Լյութերը, նրա կյանքն ու գործունեությունը ժամանակի սոցիոմշակութային համատեքստում:

- Կալվինը, Մյունցերը, Ցվինգլին որպես նոր կրոնական գաղափարախոսության և աշխարահայացի կրողներ: Բողոքական ուղղությունների ձևավորումն ու մշակույթը:

- Բողոքական էթիկան և կապիտալիզմի ոգին: Մ. Վեբերի տեսությունը:

## **Թեմա 13. Ռացիոնալիզմի ծնունդը և գիտության սկիզբը: Վերածննդի պարադոքսները:**

- Աշխարհընկալման անտիկ մոդելի «վերադարձ»: Ռացիոնալ գիտելիքի գաղափարի առաջացումը:

- Աշխարհի պատկերի և իրերի բնության մասին պատկերացումները: Երկնային և երկրային համանմանություններ:

- Գիտելիքի կուտակումը: Առարկաների և երևույթների մասին տեղեկությունների դասակարգման առաջին փորձեր: Գրադարաններ, հավաքածուներ և կուրսսականերաներ:
- Տիեզերքի կառուցվածքի վերաբերյալ նոր ռացիոնալ հարացույցի առաջացումը՝ Կոպերնիկոսը, Բրունոն և Գալիլեոսը:
- Հիշողությունը և դրա նոր ընկալումը Վերածննդի դարաշրջանում:
- Պատմության փոփոխված ընկալումը:
- Բժշկությունը ռացիոնալի և իռացիոնալի սահմանագծում: Նոստրադամուսը և նրա գուշակությունները: Հոմեոպաթիայի առաջացումը. Պարացելսիուս:
- Ալքիմիայից դեպի քիմիա: Փիլիսոփայական քարը և հավերժ կյանքի հնարավորության գաղափարը:

**Թեմա 14. Առօրեականության մշակույթը**

- Ասպետական մշակույթի անկումը և կերպարանափոխումը (Սերվանտեսի «Դոն Կիխոտը»):
- Վերածննդի դարաշրջանի մարդկանց կենսական տարածությունը. բնակարան, պալատ, հրապարակ, տաճար:
- Վերածննդի կենցաղային մշակույթը. հսոհանոցը. Տարազը և նորաձևության միտումները: Հիգիենան: Գեղեցկության մասին պատկերացումները:
- Ընտանիքը և միջսեռային հարաբերությունները: Կնոջ էմանսիպացման խնդիրը:

## Նոր դարի մշակույթ

### **Թեմա 15. Ժամանակաշրջանի բնութագրությունը և չափորոշիչները:**

- «Նոր դար» կամ «մոդեռնականություն» հասկացության մշակութաբանական նշանակությունը, իմաստավորումը և ժամանակագրությունը:

- Մոդեռնականության հիմնական չափորոշիչները (բանականացում, անհատականացում, աշխարհիկացում և այլն):

- Եվրոպայի զարգացման ուրույն և բացառիկ ուղու հարցը գիտության մեջ («Եվրոպական հրաշք») և նրա քննադատները:

- Մոդեռնականության հայեցակարգի ներազդումը 17-19-րդ դդ. Եվրոպական մշակույթի տարբեր ոլորտների ուսումնասիրման վրա:

### **Թեմա 16. Մեծ աշխարհագրական բացահայտումներն ու գաղութացման դարաշրջանի մշակութային զարգացումները:**

- Մեծ աշխարհագրական բացահայտումների դարաշրջանի քաղաքական, սոցիալական և տնտեսական հիմնավորումը: Եվրոպական մեծ ծովային կայսրությունների ձևավորման շարժառիթները:

- Գաղութացման դարաշրջանի սոցիոմշակութային նախադրյալները և հետևանքները (քաղաքակրթությունների պայքարը և երկխոսությունը, տեխնիկական, արդյունաբերական և մթերային «հեղափոխությունների» սկիզբը):

- Գնահատարհորդությունը որպես մշակութային երևույթ: Գրական արկածախնդրային ժանրի առաջացումը, աշխարհի, մարդու, մշակույթների տարբերությունների մեկնաբանումն ու իմաստավորումը գրականության մեջ (Դ. Դեֆո, Ջ. Սվիֆթ):

- Ծովահենությունը որպես մշակութային երևույթ:

**Թեմա 17. Ոճային գերիշխանություն. Բարոկյան մշակույթ:**

- Արվեստի ոճեր և մշակութային մոդելներ:
- Իտալական բարոկոյի որպես հակառեֆորմացիոն արվեստի ծնունդը:
  - Բարոկոյի չափորոշիչները, մշակութային ենթատեքստը և դրսևորումները արվեստում ու կենցաղում:
  - Եվրոպայում բարոկոյի տարածման առանձնահատկությունները. կրոնականից դեպի աշխարհիկը:
  - Անհատի դերը բարոկո մշակույթի ձևավորման գործում: Արվեստագետի և կերպարվեստի սոցիոմշակութային դիրքավորումը բարոկոյի դարաշրջանում:

**Թեմա 18. Միապետական համակարգի մշակութային առանձնահատկությունները:**

- Միապետական համակարգի մշակութային առանձնահատկությունները:
  - Վերսալը որպես ֆրանսիական վերնախավի մշակույթի խտացված մոդել: Վերսալի ճարտարապետական, գաղափարային և տարածական սիմվոլիզմը:
    - 17-18-րդ դդ. վերնախավի մշակութային նորմերն ու պրակտիկաները: Եվրոպական դասական վարվելակարգի ձևավորումը:
    - Վերնախավի առօրեականության յուրահատուկ մոդելների ձևավորումը (սննդահամակարգ, նորաձևություն, ժամանց, ընտանիք, միջսեռային փոխհարաբերություններ):

**Թեմա 19. Բարոկյան թատրոնն ու երաժշտությունը:**

- Բարոկյան թատրոնի ժանրերը, տեսակները և սոցիալական գործառույթները:
  - Վերնախավի երաժշտական մշակույթը: Նոր երաժշտության տեսակների, ձևերի, ժանրերի ու գործիքների առաջացումը: Գործիքների սոցիալական հիերարխիան:

- Օպերայի ծնունդը և 17-18-րդ դդ. երաժշտական թատրոնի սոցիալական և խորհրդաբանական ենթատեքստը:

**Թեմա 20. 17-18-րդ դդ. գյուղացիական մշակույթը:**

- «Ժողովրդական», «գյուղացիական» մշակույթը վերնախավի պատկերացմամբ՝ ոճավորումն ու իդեալականացումը:

- Գյուղական համայնքը 17-18-րդ րդ. դարերում: Համայնքի քայքայման գործընթացի սկիզբը, ֆերմերային տնտեսությունների առաջացումը:

- Գյուղացու միկրո- և մակրոտիեզերքները և առօրեականության մոդելները:

- 17-18-րդ դդ. գյուղական խռովությունները սոցիոլոգիան ու մարդաբանությունը:

**Թեմա 21. Քաղաքը և քաղաքի բնակչությունը 17-18-րդ դդ.**

- 17-18-րդ դդ. ուրբանացման գործընթացները և դրանց պատճառներն ու հետևանքները:

- Կապիտալիստական տնտեսության զարգացումն ու քաղաքները:

- Քաղաքային տնտեսական, վիճակագրական, լանդշաֆտային և սոցիալական փոխակերպումները 17-18-րդ դդ.:

- 17-րդ դ. Լոնդոնը որպես մոդեռն քաղաքի ձևավորման օրինակը: Լոնդոնի քաղաքների բնակչության առօրեական պրակտիկաները:

**Թեմա 21. Լուսավորության շարժումը և եվրոպական ռացիոնալիզմի զարգացման դարաշրջանը:**

- Լուսավորության շարժման բովանդակությունն ու տրամաբանական զարգացումները: Լուսավորության մշակութային իդեալը:

- Մարդու, հասարակության, իշխանության, բնության, պատմության, իրավունքի նոր հայեցակարգերը: Գաղափարն ու իրականությունը:

- Հանրագիտարանային գիտելիքի դարաշրջան: Դիդրոյի հանրագիտարանը:
- Վոլտերը և Լուսավորության անհատը:

**Թեմա 22. Գիտության ծնունդը:**

- Աշխարհի «կախարդագերծունը» (Վեբեր): Դ. Յուլմը և կրոնը:
- Աշխարհի և տիեզերքի նոր ռացիոնալ և պոզիտիվիստական մոդելների ձևավորումը: Կարտեզիան աշխարհահայացքը: Նյուտոնը և «անտեսանելի ակադեմիան»:
- Բնության ռացիոնալիստական մեկնաբանման սկիզբը: Լևենհուկը, Սպալանցանին և մանրէները:
- Մարդկային մարմինը և նրա հանդեպ նոր մոտեցումները: Անատոմիայի ուսումնասիրման նոր փուլը՝ անատոմիկ թատրոններ և ատլասներ:
- Աշխարհի «մեքենայացման» սկիզբը: Կարի մեքենայի, գուլպագործական և այլ հաստոցների հայտնագործումը: Մարդ և մեքենա հակադրությունը, լուդիտների շարժումը:
- Գիտության ինստիտուցիոնալացման գործընթացի սկիզբը՝ ակադեմիաների, լաբորատորիաների ստեղծումը: Բնական և ճշգրիտ գիտությունների ներթափանցումը համալսարանական կրթության մեջ:

**Թեմա 23. Մեծ Ֆրանսիական հեղափոխության սոցիալական, մշակութային և քաղաքակրթական ենթատեքստը:**

- Մեծ Ֆրանսիական հեղափոխությունը և եվրոպական ազգերի ծնունդը:
- Հեղափոխությունը որպես մշակութային երևույթ: Ֆրանսիական հեղափոխության սիմվոլիկ, առասպելաբանական և ծիսական տեքստը և համատեքստը: Հին և նոր աշխարհների համադրությունն ու պայքարը: Հեղափոխական տեռորի մարդաբանությունը:
- Հեղափոխական մշակույթը՝ առօրեականությունը, հասարակական կառուցվածքը, սոցիալական և մշակութային պրակտիկաներ:

րը, գրական և երաժշտական ժանրերը, գաղափարական պրոպագանդան և նրա գործիքները: Հեղափոխական ֆեմինիզմը:

- Ֆրանսիական նոր ազգի ստեղծումը: Նոր ազգի չափանիշները:

**Թեմա 24. Կայսերական (նապոլեոնյան) դարաշրջանի ոճաբանական և գաղափարային առանձնահատկությունները:**

- Նապոլեոնյան պատերազմների գաղափարական հիմնավորումը և կայսերական դարաշրջանի մշակութային առանձնահատկությունները:

- Անտիկ դասականության վերադարձը: «Ամպիր» ոճը: Նապոլեոնի անհատի պաշտամունքի ձևավորումը և ռոմանտիկ հերոսի կերպարի ներթափանցումը եվրոպական մշակույթի մեջ:

- Էլիտար «սալոնային» մշակույթի ձևավորման ավանդույթը: Կուրտիզանուհիները:

**Թեմա 25. Ռոմանտիզմը որպես եվրոպական մշակույթի ոճաբանական, գաղափարաբանական և նորմատիվ կազմակերպման գործոն:**

- Ռոմանտիզմի բնութագրումը ու հիմնական գաղափարային մշածողերը: Ռոմանտիզմը որպես գեղարվեստական շարժում և կենցաղի, առօրեականության, մարդկային հարաբերությունների, զգայական աշխարհի կազմակերպման և ընկալման նոր հայեցակարգ:

- Մերժված ու տապալված հերոսի կերպարը եվրոպական մշակույթում: Բայրոնը և բայրոնիզմը: «Դժբախտ» և «երջանիկ» սիրո գաղափարների դրսևորումը գրականության մեջ: Կանացի վեպը (Օստին, Բրոնտե):

- Անցյալի, պատմության, «ազգային» ռոմանտիզացումը:

- Երևակայությունն ու միստիցիզմը եվրոպական մշակույթում (Հոֆման, Մեթյուրին, Օդոնսկի):



**Թեմա 26. Պատմական և ազգային հիշողության ձևավորումը: Նոր պատմագիտության և հնագիտության ծնունդը:**

- «Ազգային պատմության» գաղափարը և գրականությունը: Պատմական վեպը և դրաման (Դյունա, Յյուզո, Մերիմե, Վալտեր Սքոթ): Եվրոպական միջնադարի «վերադարձն» ու ռոմանտիզացումը:

- Նոր պատմագիտական մտքի ձևավորումը: Հեռացումը աստվածաշնչային պատմությունից և ազգային ակունքների փնտրտուքը: Հորինած ավանդույթը եվրոպական մշակույթում:

- Պատմության, ներկայի և անցյալի հուշարձանացման սկիզբը (հուշարձանների, հուշաքարերի, հաղթականարների մշակույթի զարգացումը):

- Հնագիտության ծնունդը և մարդկության անցյալի հանդեպ հետաքրքրության աճը: Հնագիտությունը և 19-րդ դ. եվրոպական գաղութատիրական քաղաքականությունը:

- «Ազգային» ավանդույթների և բանահյուսության հանդեպ հետաքրքրությունը: Եվրոպական քաղաքային տոնական «ավանդույթների» մշակումը (Սուրբ Ծննդյան ընտանեկան ավանդույթներ, հելլոուին և այլն): «Մշակված» հեքիաթներ և հեքիաթների ժանրի ծաղկումը (Հոֆման, Հաուֆ, Անդերսեն, Գրիմմ Եղբայրներ, Շ. Պեռո, Լյուիս Քեռոլ):

- Հասարակական թանգարանների և պատկերասրահների ստեղծումը: Լուվրի հավաքածոյի ձևավորումը, ազգային թանգարանների ստեղծումը:

- Մշակութային տուրիզմի սաղմնավորումը. մշակութային ուխտագնացություն դեպի Իտալիա (Ստենդալ):

**Թեմա 27. Ազգայնականությունը 19-րդ դարում:**

- Ազգայնականությունը և ազգային ինքնությունը 19-րդ դարում: «Ազգակերտման» գործընթացը: Եվրոպական բնիկ ժողովուրդների (կելտերի, գալլերի, սկանդինավների, հին գերմանացիների) առասպելաբանության «բացահայտումը»:

- Ժողովրդական երաժշտության դասականացումը և ազգային երաժշտական դպրոցները (Գրիգ, Ղվորժակ, Վազներ, Ռիմսկի-Կորսակով, Մուսորգսկի):

- Ազգայնական շարժումների առաջացում: Ռասայական և մարդաբանական տեսությունները: 19-րդ դ. հրեական ազգայնականության առանձնահատկությունները. Թ. Չերցլ: Հրեաների սոցիալ-տնտեսական կացության առանձնահատկությունները, նոր հրեական գաղթը: Սիոնիզմի և հակասեմականության մշակութային ասպեկտները:

**Թեմա 28. Կրթությունը մոդեռնականության շրջանում:**

- Ճիզվիտների կրթական մոնոպոլիայի վերացումը և կրթության աշխարհիկացումը: Նոր տիպի մանկավարժության զարգացումը՝ Կոմենսկի, Ռուսո, Պեստալոցցի:

- Գիտելիքի ստանդարտացումը, ապակրոնացումը և ապահունամիտարացումը: Տարրական և միջնակարգ կրթության կոնցեպցիաներ: Տնային կրթության մոդելներ: Կանանց կրթությունն ու դաստիարակությունը:

- Եվրոպական համալսարանական կրթության երեք մոդելների ձևավորում (անգլիական, ֆրանսիական, գերմանական): Նոր գիտակարգերի առաջացումը:

- Ուսանողությունը որպես ենթամշակույթ: Ուսանողական միությունները:

**Թեմա 29. Պատերազմը, քաղաքական պայքարը և զինվորականությունը 18-19-րդ դդ. մշակութային ենթատեքստում:**

- 18-19-րդ դդ. պատերազմը որպես մշակութային երևույթ. ռազմավարության, տակտիկայի ընդունված նորմերն ու կաղապարները, դիվանագիտության «լեզուն», պատերազմը որպես թատրոն: Իդեալական պատերազմի գեղարվեստական մարմնավորումը՝ բատալիստական ժանրը գեղանկարչության և գրականության մեջ: Զինվորականի հերոսականացված կերպարը: Եվրոպական երկրներ

րի գինվորական ատրիբուտիկայի նշանաբանությունը: Պատվի օրենքը և մեծամարտությունները: Ռազմիկի մասկուլին և «դեմոկրի» ֆեմինին կերպարների հակադրումը 18-19-րդ դդ. մշակույթում:

- Գաղտնի կազմակերպությունների ենթամշակույթը: Մասունությունը: Հեղափոխական-ազատագրական, հայրենասիրական կազմակերպությունները (կարբոնարները, «Երիտասարդ Իտալիան», դեկաբրիստները):

**Թեմա 30. Կապիտալիստական տնտեսության, ազատ շուկայի և լիբերալիզմի գաղափարախոսությունը, տեսությունները և գործընթացները:**

- Ինդուստրիալացման դարաշրջանը: Տնտեսական զարգացման ձևերի և տեսակերի փոփոխությունը: Սոցիալական և տնտեսական տեսությունների առաջացումը 19-րդ դ. (Ա. Սմիթ, Կ. Մարքս), Լիբերալիզմը որպես միջին դասակարգի գաղափարախոսություն:

- Սոցիալական գործընթացների արագացումը 19-րդ դ., աշխատանքային արտագաղթը և Եվրոպայի ուրբանացման գործընթացը: Տարածության և ժամանակի «կրճատումը» և հաղորդակցման ակտիվացումը (երկաթուղիների, հեռագրի միջոցով): 19-րդ դ. եվրոպական «գլոբալացման» առանձնահատկությունները. անգլիական (մոդեռնիզացիա) և ֆրանսիական (ավանդապահություն) քաղաքակրթությունների մրցույթը:

- Աշխարհիկացման գործընթացները Եվրոպայում: Ավանդական կրոնների ինստիտուցիոնալ անկման սկիզբը:

- «Ավանդական» մշակույթների անհետացումը Եվրոպական արդիականացման գործընթացների ազդեցության ներքո:

**Թեմա 31. 19-րդ դ. գիտությունն ու բժշկությունը որպես սոցիալական համակարգեր:**

- Դարվինիզմը և էվոլյուցիայի գաղափարը:

- 19-րդ դ. տեխնիկական զարգացումը: Էներգիայի նոր աղբյուրներ: Գիտատեխնիկական առաջընթացի քաղաքակրթական և սոցիալական համատեքստը:

- Բժշկության զարգացումը մարդու ֆիզիոլոգիայի և հիվանդությունների էթիոլոգիայի մասին նոր ռացիոնալ պատկերացումների պայմաններում: Հանրային բժշկության ինֆրակառույցի զարգացում՝ հիվանդանոցներ, ծննդատներ: Դարի հիվանդությունները, համաճարակներ և դրանց դեմ պայքարը: Կնոջ ֆիզիոլոգիան նոր դարաշրջանի մշակութային ենթատեքստում. Ծննդօգնության նոր պրակտիկաներ, ցավազրկում, կրծքային սնուցման և ծծմայրերի գործածման դիսկուրսներ:

- Գիտության և տեխնիկայի հետ կապված նոր գրական ժանրերի առաջացում. Գիտական ֆանտաստիկա և դետեկտիվ (Ժյուլ Կեռն, Յ. Ուելս, Կոնան Դոյլ):

- Գերմանական փիլիսոփայության դարաշրջանը, նրա սոցիալական և մշակութային ակունքները և ազդեցությունը 19-20-րդ դդ. ինտելեկտուալ վերնախավի վրա: Մարդու, քաղաքակրթությունների, պատմության վերաիմաստավորման կարիքի առաջացումը:

**Թեմա 32. 19-րդ դ. բուրժուական և ազնվական վերնախավերի աշխարհահայացքը և սոցիալական պրակտիկաները:**

- 19-րդ դ. վերնախավի ապրելակերպը և կենցաղային մշակույթը: Ժամանցի և սոցիալականացման վայրերն ու պրակտիկաները՝ պարահանդեսները, թատրոնը: Խոհանոցը և նորաձևությունը:

- Ամուսնությունը, ընտանիքը և ընտանեկան կենցաղը: Տունը և տնային տնտեսությունը, տեր և ծառա փոխհարաբերությունները: Մանկության մշակույթի առաջացումը. խաղալիքներ, մանկական գրականություն, դաստիարակիչներ: Տնային գրադարանների պարունակությունը: Սերը և սիրահետումը որպես սոցիալական պրակտիկաներ:

- 19-րդ դ. զանգվածային մշակույթը: Գրագիտության և տարրական կրթության տարածումը: Զանգվածային գրականության

ժանրերի ձևավորումը. «Մատենաշարային», գրականություն: Ընթերցանությունը որպես էլիտար ժամանցի տեսակ: Պարբերականները և դրանց ազդեցությունը մշակույթի վրա: Դրամատիկական և երաժրչտական թատրոնները: Օպերան և թատրոնը որպես աշխարհիկ, հասարակական կյանքի բաղադրամասեր:

- Եվրոպական տուրիզմի սկիզբը: Հանգստավայրերն ու առողջարանները: Զվարճավայրերի և զվարճանքների ինդուստրիան: Ռեստորանների և հասարակական սննդի հաստատությունների կերպարանափոխումը: Ակումբային կյանք: Սիրողական և պրոֆեսիոնալ սպորտի առաջացումը. ազնվականությանը հատուկ սպորտաձևեր (բիլիարդ, գոլֆ, կրիկետ, կրոկետ, ձիավարություն և այլ), միջին դասակարգի ժամանցային սպորտաձևեր (լեռնագնացություն, ֆուտբոլ): Թղթախաղ:

- Նորաձևության ինդուստրիայի զարգացումը 19-րդ դ.: Նորաձևության փոփոխությունները 19-րդ դ. գեղեցկության իդեալը և դրա ձեռքբերման ուղիներն ու հնարավորությունները:

**Թեմա 33. «Մոդեռն» մշակույթի «անկման» դարաշրջանի առանձնահատկությունները:**

- 19 դ. երկրորդ կեսի արվեստի ուղղությունները: Իմպրեսիոնիզմ և պոստ-իմպրեսիոնիզմ: Դեկադանսը և սիմվոլիզմը գրականության (հատկապես պոեզիայի) և կերպարվեստի մեջ:

- Բոհեմը որպես մշակութային երևույթ: Բոհեմի «ներկայացուցչի» կարծրատիպային հատկանիշները և սիմվոլները՝ բնակության և ժամանցային միջավայրերի, տարածքի, կենսակերպի, արտաքին տեսքի, սոցիալական կարգավիճակի համատեքստում: Փարիզը և Մոնմարտը որպես մշակութային տարածություն:

- Մեկենասությունը որպես մշակութային երևույթ: Մեկենասը և արվեստագետը: Բարեգործության մշակույթը:

- Լիբերալ մտավորականության ձևավորումը:

- 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբի կրոնական վերելքը: Կրոնական հանդուրժողականությունը, կաթոլիկների և բողոքականների իրա-

վունքների հավասարեցումը: Միջեկեղեցական կոնտակտներ, էկոմենիկ շարժումների սկիզբը: Ֆունդամենտալիզմ: Հետաքրքրությունը Արևելքի կրոնական համակարգերի հանդեպ: Միստիցիզմի և էզոտերկայի, օկուլտիզմի, տեոսոֆիայի զարգացումն ու ազդեցությունը մտավորական մշակույթի վրա (Շյուրե, Ռերիխ, Բլավատսկայա, Շտայներ և ուրիշներ):

## **Գործնական պարապմունքների թեմաներ**

1. Վերածննդի հայեցակարգը և դրա պատմա-մշակութային և սոցիալական համատեքստը:
2. Վերածննդի մշակութային «լեզուն»՝ նշանային համակարգը և մշակութային կարծրատիպերը:
3. Հունանիզմը և Վերածննդի փիլիսոփայական ու կրթական համակարգը:
4. «Գեղագիտական» հեղափոխության հիմքերն ու սկզբունքները:
5. Վերածննդի կրոնական մշակույթը:
6. Նոր դարի կամ «մոդեռնականության» գաղափարը, չափորոշիչները և հետազոտման գիտական մոտեցումները:
7. Բարոկյան մշակույթը:
8. 17-18-րդ դդ. քաղաքային և գյուղական մշակույթը:
9. Հեղափոխությունների դարը և մշակութային փոխակերպումները:
10. Պատմական և ազգային հիշողության ձևավորումը:
11. 18-19-րդ դդ. սոցիալական կառուցվածքի և առօրեական պրակտիկաների փոխակերպումները:
12. Եվրոպական քաղաքակրթության հիմնահարցը:

## Հարցեր կրկնության և ստուգման համար

### Վերածննդի մշակույթ՝

1. Ինչու՞ է պատմա-մշակութային դարաշրջանը ստացել «Վերածնունդ» անվանումը և ովքե՞ր են այդ եզրույթի հեղինակներն ու մեկնաբանները: Ո՞րն է Վերածննդի պատմա-մշակութային պարբերացումը և ի՞նչ չափանիշներով է պայմանավորված:

2. Ո՞րոնք են Վերածննդին վերաբերող հիմնական գիտական դասական և արդի կոնցեպցիաներն ու մեկնաբանությունները:

3. Ի՞նչ է նշանակում Յուլիսային Վերածնունդ և ինչո՞վ է այն տարբերվում իտալականից:

4. Ինչպիսի՞ն էին Վերածննդի դարաշրջանի իտալական քաղաքների տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացումները:

5. Որո՞նք էին Վերածննդի մշակութային կենտրոնները: Ինչու՞ հենց դրանք:

6. Որո՞նք էին Ֆլորենցիայի աննախադեպ մշակութային զարգացման հիմնական պատճառները:

7. Ի՞նչ է հումանիզմը: Ովքե՞ր են եղել առաջին հումանիստները:

8. Պատմական ո՞ր շրջանի մշակութային մոդելն էր համարվում իդեալական և հիմնավոր Վերածննդի համար: Ինչու՞ տեղի ունեցավ մշակութային անդրադարձ հենց այդ մոդելին:

9. Ի՞նչ հիմնական գաղափարների և կոնցեպցիաների վրա էին հիմնված Վերածննդին բնորոշ նշանային-խորհրդաբանական և բարոյա-գեղագիտական համակարգերը:

10. Ինչպե՞ս է փոփոխվել հասարակության աշխարհահայացքը և մտածելակերպը Վերածննդի դարաշրջանում մարդու, հասարակության և աշխարհի ստեղծման, ժամանակի, տարածության, զարգացման և ապագայի նկատմամբ:

11. Որո՞նք էին Վերածննդի իշխող փիլիսոփայական հայեցակարգերը:

12. Ինչպիսի՞ն էր անհատի մշակութային և հասարակական ընկալումն ու դերը Վերածննդի դարաշրջանում և անհատի ի՞նչ տեսակներ է այն առաջացրել:

13. Որո՞նք էին ուսուցման և ճանաչողության հիմնական մոդելները Վերածննդի դարաշրջանում:

14. Ինչու՞ն էր կայանում այսպես կոչված «գեղարվեստական հեղափոխությունը» Իտալիայում:

15. Որոնք էին նոր արվեստի հիմնական սկզբունքները, մոտեցումներն ու զարգացման ընթացքը:

16. Ինչպիսի՞ն էր Վերածննդի դարաշրջանի արվեստագետի սոցիալական դիրքն ու մշակութային ազդեցությունը:

17. Որո՞նք են Վերածննդին բնորոշ տարածության կազմակերպման սկզբունքները և քաղաքաշինության հայեցակարգը:

18. Ինչու՞ Վերածննդի դարաշրջանում կարևորություն է ստանում գրական լեզվի խնդիրը:

19. Ինչո՞վ է պայմանավորված ազգային գրականությունների զարգացումը Վերածննդի դարաշրջանում: Ի՞նչ գրական ժանրեր են զարգանում:

20. Ի՞նչ զարգացում է ապրել Վերածննդի երաժշտական մշակույթը միջնադարի հետ համեմատ և ինչու՞:

21. Որո՞նք են Վերածննդի թատրոնի մշակութային առանձնահատկությունները և ի՞նչ սոցիալական դեր էին այն խաղում վերածննդյան հասարակություններում:

22. Ինչպիսի՞ն էր Վերածննդի դարաշրջանի Եվրոպայի կրոնական համակարգը:

23. Որո՞նք են կաթոլիկության ճգնաժամի պատճառները և որոնք էին այն հաղթահարելու մեխանիզմները:

24. Որո՞նք էին Ռեֆորմացիայի հիմնական նախադրյալներն ու սոցիո-մշակութային պատճառները:

25. Ի՞նչ մշակութային փոփոխություններ են առաջացրել նոր կրոնական շարժումները եվրոպական հասարակություններում:

26. Ո՞րն է բողոքականությանը վերաբերող Մ. Վեբերի կոնցեպցիան:



27. Ինչպիսի՞ն էր գրատպության առաջացման մշակութային ենթատեքստը և ի՞նչ գլոբալ մշակութային գործընթացներ օգտվեցին գրատպության զարգացումից:

28. Ձարգացման ի՞նչ ուղիներ են անցել գիտությունը և բժշկությունը Վերածննդի դարաշրջանում:

29. Ինչու՞ է Վերածննդի դարաշրջանը նշանավորվել բազմաթիվ «ուտոպիաների» ստեղծմամբ:

30. Որո՞նք են Վերածննդին բնորոշ առօրեական կյանքի հիմնական մոդելները՝ ապրելակերպի, հագուկապի, հաղորդակցման, ընտանիքի և միջսեռային հարաբերությունների տեսակետից: Ինչպե՞ս էին դրանք կապակցված դարաշրջանի հիմնական առանձնահատկությունների հետ:

### **Նոր դարի մշակույթ՝**

1. Ինչու՞ է առաջացել Նոր դար անվանումը (modernity, մոդեռնականություն) և ի՞նչ իմաստավորում է այն ստացել ժամանակակից գիտության մեջ: Որո՞նք են Նոր դարի հիմնական չափորոշիչները:

2. Որո՞նք էին գաղութացման դարաշրջանի սոցիո-մշակութային նախադրյալներն ու հետևանքները: Ի՞նչ փոփոխություններ և երևույթներ է այն առաջացրել Եվրոպայի մշակութային համակարգում (գաղափարային, ճանաչողական, տնտեսական, քաղաքական, կրոնական, ազգային, առօրյա ոլորտներում): Ինչպե՞ս են արտացոլվել գաղութացման հետ կապված նոր մտածելակերպն ու աշխարհահայացքը գրականության, գիտության, արվեստի և կրոնի մեջ:

3. Ի՞նչ է բարոկոն, որտե՞ղ և ինչպե՞ս է այն առաջացել և որո՞նք են դրա առաջացման պատճառներն ու մշակութային նշանակությունը: Որո՞նք են բարոկոյի որպես համապարփակ մշակութային ոճի հիմնական հատկանիշները: Որո՞նք են բարոկոյի մշակութային-ազգային տեսակները և դրանց տարբերությունները:

4. Ինչու՞ Վերսալյան ճարտարապետական համալիրը կարելի է համարել բարոկյան մշակութային մտածելակերպի և աշխարհա-

հայացքի մոդել: Ինչպե՞ս էին փոխկապված մարդկանց ապրելակերպը և շրջակա միջավայրը բարոկյան դարաշրջանում: Ի՞նչ նշանակություն ուներ անտիկ առասպելը բարոկյան մշակութային ենթատեքստում: Ի՞նչ վարվելակարգային փոփոխություններ բերեց իր հետ բարոկյան մշակութային համակարգը: Ինչո՞վ էր բացատրվում բարձրագույն խավերի հասարակական կյանքի և առօրյա մշակույթի սիմբոլիզմն ու պայմանականությունը:

5. Ի՞նչ ազդեցություն ունեցավ բարոկյան մտածելակերպը և ապրելաոճը գեղարվեստի, գրականության և թատրոնի զարգացման վրա և որո՞նք էին այդ զարգացման հիմնական միտումները:

6. Որո՞նք էին եվրոպական թատրոնի զարգացման հիմնական կենտրոնները: Ինչպիսի՞ն էր 17-18-րդ դդ. եվրոպական թատրոնի ժանրային տեսականին և ինչպե՞ս է այն փոխկապակցված հասարակության սոցիո-մշակութային իրականության և զարգացումների հետ:

7. Ինչո՞վ էին պայմանավորված 17-18-րդ դարի երաժշտական կյանքի վերելքն ու կտրուկ փոփոխությունները: Որո՞նք էին այդ փոփոխությունները: Որո՞նք էին նոր երաժշտական ժանրերի ու ոճերի զարգացման միտումներն ու հատկանիշները: Որո՞նք էին երաժշտական-գործիքների ոլորտում եղած զարգացումների սոցիալական-մշակութային ենթատեքստն ու մեխանիզմները: Ի՞նչ դեր ուներ անհատի գործոնը բարոկյան և կլասիցիզմի երաժշտության զարգացման ընթացքում: Ինչպե՞ս էին փոխկապակցված երաժշտությունը և նոր դարին բնորոշ մշակութային-հասարակական նոր զարգացումներն ու երևույթները: Ինչո՞վ էին պայմանավորված օպերայի և բալետի առաջացումն ու զարգացումը:

8. Ինչպե՞ս են բարոկոն և դրան հաջորդող հարակից ոճերը իրենց դրսևորել քաղաքաշինության մեջ և քաղաքային մշակույթում: Որո՞նք էին դարաշրջանի քաղաքային կյանքի կենտրոնները, ինչո՞վ էին նման և ինչո՞վ տարբեր:

9. Որո՞նք էին 17-18-րդ դարերի գյուղական համայնքին վերաբերող հասարակական և մշակութային փոփոխությունները և ինչո՞վ էին դրանք պայմանավորված: Ինչպիսի՞ փոփոխությունների է

ենթարկվել Եվրոպական հասարակության սոցիալական նկարագիրը 17-18-րդ դդ.:

10. Ի՞նչ էր Լուսավորությունը և ինչու՞ էր այդպես կոչվում: Որո՞նք էին Լուսավորության դարաշրջանի նախադրյալները, սոցիոմշակութային ենթատեքստը և գաղափարական հիմքը: Որոնք էին լուսավորիչների գաղափարական սկզբունքներն ու աշխարհահայացքը: Ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ Լուսավորությունը Եվրոպայի թե՛ ժամանակակից, թե՛ հետագա մշակութային պատմության վրա: Ինչպիսի՞ն էր Լուսավորության ժամանակաշրջանի անհատը և ինչպիսի՞ն էին նրա փոխհարաբերությունները հասարակության հետ:

11. Ինչու՞ և ինչպե՞ս փոխվեցին մոտեցումները գիտության ու կրթության հանդեպ Լուսավորության ժամանակաշրջանում: Որո՞նք էին գիտության և կրթության նոր սկզբունքները և դրանք ներմուծելու մեխանիզմները: Ի՞նչ ի նկատի ուներ Մ. Վեբերը՝ «աշխարհի կախարդագերծման» թեզը առաջ քաշելով: Որո՞նք էին լուսավորիչների հիմնական մոտեցումները կրոնի, աշխարհի առաջացման, մարդկային հասարակության վերաբերյալ:

12. Ի՞նչ մշակութային փոփոխություններ առաջացրեցին նոր դարի տեխնիկական և գիտական բացահայտումները: Ի՞նչ սոցիալական գործընթացներով էին դրանք ուղեկցվում:

13. Ինչու՞ ենք մենք դիտում Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը որպես ուրույն մշակութային երևույթ: Ո՞րն է հեղափոխության մշակութային և սոցիալական համատեքստը: Ո՞ր մշակութային և սոցիալական գործընթացներն էին նախադրյալ ծառայել հեղափոխության համար: Որո՞նք էին Ֆրանսիական հեղափոխության մշակութային և հասարակական հետևանքները: Ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ Ֆրանսիական հեղափոխությունը ժամանակակից Եվրոպայի ազգերի և արժեքների ձևավորման վրա:

14. Որո՞նք են «կլասիցիզմ» և «ամպիր» ոճերի բնորոշումները: Ինչո՞ւ առաջացավ ռուսական ամպիրը և ինչո՞վ էր այն տարբերվում բուն ֆրանսիականից:

15. Որո՞նք են ռոմանտիզմի մշակութային և սոցիալական ակունքները և ինչպե՞ս է այն փոխկապված նախորդ պատմա-մշակութային ժամանակահատվածների հետ: Որո՞նք են ռոմանտիզմի բնորոշիչները: Ինչու՞ ռոմանտիկ հերոսի խորհրդաբանական կերպարն այդքան լայն տարածում ստացավ 19-րդ դ. առաջին կեսի եվրոպայում և ո՞ր մշակութային, քաղաքական և սոցիալական գործընթացների հետ էր համատեղված և փոխկապակցված: Որո՞նք էին ռոմանտիզմին բնորոշ անհատի հիմնական տիպարները: Ո՞րն է ռոմանտիզմի և ազգային զարգացման աղերսվածությունը:

16. Ինչպե՞ս էր ռոմանտիզմը դրսևորվում արվեստի տարբեր ճյուղերում (կերպարվեստ, գրականություն, պոեզիա, քանդակագործություն): Որո՞նք էին կերպարվեստի ռոմանտիզմի ընթացքում առաջացած ժանրերն ու ո՞րն է դրանց մշակութային-հասարակական համատեքստը:

17. Ինչո՞վ էր պայմանավորված պատմագիտության ծագումը 19-րդ դարում: Ինչպե՞ս են այդ շրջանում փոփոխվել թե՛ համաշխարհային, թե՛ ազգային պատմության մասին պատկերացումները և ինչու՞: Ինչպե՞ս էին ձևավորվում պատկերացումներ ազգային մշակութային կոթողների և հուշարձանների մասին 19-րդ դ.: Որո՞նք էին ազգային պատմության կերտման գործընթացների բաղադրամասերը:

18. Ինչու՞ և ինչպե՞ս 19-րդ դարում առաջացավ և զարգացավ հետաքրքրությունը հնագիտության նկատմամբ: Ի՞նչ ազդեցություն ունեցան հին աշխարհի մասին նոր տեղեկությունների բացահայտումն ու կուտակումը ողջ մարդկության պատմության մասին պատկերացումների զարգացման վրա: Ինչպիսի՞ն էր թանգարանային մշակույթի զարգացման ուղին և ինչո՞վ էր պատճառաբանված ժամանակակից թանգարանային մշակույթի առաջացումը 19-րդ դարում: Ո՞րն է օրիենտալիզմի մշակութաբանական մեկնաբանումը: Ինչպե՞ս էին զարգանում մշակութային «ուխտագնացության» և տուրիզմի պրակտիկաները 19-րդ դ.:

19. Ինչպիսի՞ն էր եվրոպական հասարակության հիերարխիկ կառուցվածքը 19-րդ դարում: Ինչպե՞ս էին ընթանում սոցիալակա-

նացման գործընթացները ազնվական խավի ներսում: Ինչպե՞ս և ինչու՞ էին դրանք զուգորդվում ժամանցային պրակտիկաների հետ: Ինչպե՞ս էին փոփոխվում 19-րդ դ. մանկության ընկալումն ու երեխաների հանդեպ վերաբերմունքը:

20. Ինչպիսի՞ն է պատերազմի հասարակական և մշակութային ընկալումը 17-19-րդ դդ. Եվրոպայում և ինչ երևույթներում է այդ ընկալումը դրսևորվում: Ո՞րն էր մեծամարտության սոցիալական և մշակութային իմաստավորումը: Որո՞նք էին մասնակից մշակույթի չափանիշները:

21. Ինչո՞վ էր պայմանավորված 18-19-րդ դդ. Եվրոպայում գաղտնի կազմակերպությունների և միությունների առաջացումը: Որո՞նք էին ամենահայտնի միությունները և ի՞նչ սկզբունքներով էին դրանք կազմակերպվում և գործում: Ի՞նչ բովանդակային և խորհրդաբանական ասպեկտներ էին դրանք պարունակում:

22. Ի՞նչ հասարակական դեր էին խաղում 19-րդ դ. թատրոնը, մանուկը, գրահրատարակությունը: Ի՞նչ գրական և գեղարվեստական ուղղություններ առաջացան 19-րդ դարի երկրորդ կեսին, ինչո՞վ էին պայմանավորված:

23. Որո՞նք էին 19-րդ դարի տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթության հիմնական մոդելները: Ի՞նչ դեր ուներ կրթությունը Եվրոպայի հասարակական կյանքում: Ինչո՞վ էին տարբերվում կանանց և տղամարդկանց կրթական մոդելները:

24. Ինչպե՞ս էին ընթանում եվրոպական հիմնական ազգերի ազգակերտման գործընթացները և որո՞նք էին դրանք: Որո՞նք են սիոնիզմի և հակասեմականության մշակութային ակունքները և ի՞նչ դեր են դրանք խաղացել Եվրոպայի ազգայնականության պատմության մեջ:

25. Ի՞նչ սոցիալական, տնտեսական, մշակութային, գաղափարական գործընթացներ է իր մեջ ներառում ինդուստրիալացման դարաշրջանը և ի՞նչ գլխավոր փոփոխությունների այն հանգեցրեց: Ի՞նչ սկզբունքներ է պարունակում լիբերալիզմը որպես գաղափարախոսություն:

26. Ի՞նչ դեր էր խաղում գիտության և տեխնիկայի զարգացումը 19-րդ դ. մշակութային գործընթացներում: Ի՞նչ նոր մշակութային և սոցիալական փոփոխություններ բերեցին բժշկագիտության և առողջապահության զարգացումն ու նոր հայեցակարգերը:

27. Ի՞նչ է նշանակում «աշխարհիկացում» (սեկուլյարիզմ) հասկացությունը, ինչ գործընթացներ է այն ենթադրում: Ի՞նչ փոփոխություններ են ունեցել եկեղեցին որպես հաստատություն, կրոնը և կրոնականությունը 19-րդ դարում: Ինչո՞վ է պայմանավորված 19-րդ դարի վերջի կրոնական վերելքը և բողոքական ուղղությունները բազմացումն ու տարածումը: Ի՞նչ է ֆունդամենտալիզմը: Ինչով է պայմանավորված միստիցիզմի, արևելյան հոգևոր պրակտիկաների, փիլիսոփայական ուսմունքների ու համակարգերի և օկուլտիզմի տարածումը եվրոպայում:

28. Որո՞նք էին 19-րդ դարի հիմնական բնագիտական, փիլիսոփայական, սոցիալական և գաղափարախոսական հայեցակարգերը, ինչպե՞ս էին դրանք փոխկապակցված և ի՞նչ հետևանքներ ունեցան եվրոպական քաղաքակրթության զարգացման գլոբալ համատեքստում:

29. Ի՞նչ է մտավորականությունը կամ ինտելիգենցիան: Ինչպե՞ս է այն առաջացել և որն է նրա սոցիալական դիրքավորումը, որոնք են հասարակական և մշակութային դերերը:

30. Ինչպե՞ս է մեկնաբանվում «ավանդության» և ավանդական մշակույթի անկման գաղափարը:

31. Որո՞նք են բարեգործության զարգացման մշակութային պատճառներն ու նշանակությունը:

32. Ինչո՞վ էին պայմանավորված 19-րդ դարի երկրորդ կեսի գրականության, պոեզիայի և կերպարվեստի վերելքն ու ոճերի, ուղղությունների բազմազանությունը և նորարարությունը: Ինչպե՞ս առաջացավ բոհեմը և որն էր դրա տեղն ու դերը եվրոպական մշակութային միջավայրում:

# Գրականություն

## Վերածնունդ

### Պարտադիր`

1. Մամիկոնյան Հ., Վերածննդի դարաշրջան, Ե., 1961:
2. Бахтин М. М., Творчество Франсуа Рабле и народная культура Средневековья и Ренессанса, М., 1990.
3. Брагина Л. М. и др., Культура Западной Европы в Эпоху Возрождения, М., Мосгосархив, 1996.
4. Буркхардт Я., Культура Возрождения Италии. Опыт исследования, М., Юристь, 1996.
5. Делюмо Ж., Цивилизация Возрождения, Екатеринбург, У-Фактория, 2006.
6. Жестаз Б., Ренессанс от Брунеллески до Палладио, М., “Астрель”, 2003.
7. История Италии, т. 1, М., 1970.
8. Хейзинга Й., Осень Средневековья, М., 2004.
9. Чемберлин Э., Эпоха Возрождения. Быт, Религия, Культура, М., Центрполиграф, 2006.
10. Bloom H., ed., The Italian Renaissance, Chelsea House Publishers, 2004.
11. Burke P., The Italian Renaissance. Culture and Society in Italy, Polity Press, Cambridge, 2014
12. Gilbert W. Renaissance and Reformation, Lawrence, KS: Carrie, 1998.

### Լրացուցիչ`

1. Античное наследие в культуре Возрождения, М., 1984.
2. Андреев М. Л., Хлодовский Р. И., Итальянская литература зрелого и позднего Возрождения, М.: Наука, 1988.
3. Бадак А. Н., Всемирная История. Возрождение и Реформация, М., 2001.

4. Баткин Л. М., Итальянское Возрождение в поисках индивидуальности, М., 1989.
5. Баткин Л. М., Данте и его время, М., 1965.
6. Берк П., Историческая антропология и новая культурная история, НЛО, 2005, # 75.
7. Варбанец И. В., Йохан Гутенберг и начало книгопечатания в Европе. Опыт нового прочтения материала, М., 1980.
8. Вебер М., Избранное. Образ общества, М., 1994.
9. Вебер М., Протестантская этика и дух капитализма. // Вебер М., Избранные произведения, – М.: Прогресс, 1990.
10. Виллани Дж., История Флоренции, М., Наука, 1997.
11. Горфункель А. Х., Томмазо Кампанелла, М., 1969.
12. Горфункель А. Х., Философия эпохи Возрождения, М., 1980.
13. Гуревич А. Я., Проблемы Средневековой народной культуры //Культура Средневековой Европы, Избранные труды, СПб, 2007.
14. Гуревич А. Я., Культура безмолвствующего большинства, М., Искусство, 1990.
15. Гинзбург К., Сыр и черви, М., РОССПЭН, 2000.
16. Де Санктис Фр., История итальянской литературы, т. 1, М., 1963.
17. Дмитриева Н., Краткая история искусств, М., 2004.
18. Дэвис Н., История Европы, М., 2006.
19. История зарубежного театра, М., 1980.
20. История культуры стран Западной Европы в эпоху Возрождения, ред. Л. М. Брагиной, М., Высшая школа, 1999.
21. История философии в кратком изложении, М., 1991.
22. История эстетической мысли, т. 2, М., 1985.
23. Итальянские гуманисты XV в. о церкви и религии, М., 1963.
24. Касаткин А. А., Очерки истории литературного итальянского языка XVIII-XX вв. - Л., 1976.
25. Касаткин А. А., Культ латыни в эпоху Возрождения (генезис и исход) // Социс. 1996, № 2.



26. Киле П., статьи по культуре Возрождения, сайт “Эпоха Возрождения”, <http://www.renclassic.ru/Ru/34/>.
27. Культура Возрождения и общество, М., 1986.
28. Культура эпохи Возрождения и Реформация, Л., 1981.
29. Кузнецов Б. Г., Эволюция картины мира, М., 1961.
30. Кузнецов Б. Г., Джордано Бруно и генезис классической науки, М., 1970.
31. Литература эпохи Возрождения, М., 1967.
32. Лосев А. Ф., Эстетика Возрождения, М., 1980.
33. Немилов А. Н., Немецкие гуманисты XV в., Л., 1979.
34. Петров М. Т., Итальянская интеллигенция в эпоху Ренессанса, Л., 1982.
35. Порозовская Б. Д., Мартин Лютер, его жизнь и реформаторская деятельность, М., 2003.
36. Порозовская Б. Д., Жан Кальвин, М., 2003.
37. Проблема стилей в западноевропейском искусстве, М., 1968.
38. Пуришев Б. И., Немецкие народные книги // Прекрасная Магелона. Фортунат. Тиль Уленшпигель, М., 1986.
39. Реутин М. Ю., Народная культура Германии: Позднее средневековье и Возрождение. М., 1996.
40. Рутенбург В. И., Титаны Возрождения, М., 1976.
41. Смирин М. М., Эразм Роттердамский и реформационное движение в Германии: очерки из истории гуманистической и реформационной мысли, М., 1969.
42. Соловьев Э. Ю., Мартин Лютер – вождь немецкой бюргерской Реформации //Религии мира: История и современность, 1983, #10, М., 1983.
43. Типология и периодизация культуры Возрождения, М., 1978.
44. Хрестоматия по истории западноевропейского театра: В 2 т., М., Искусство, 1953-1955.
45. Хрестоматия по зарубежной литературе. Эпоха Возрождения: В 2 т., М.: Искусство, 1959-1962.

46. Шпренгер Я., Инститорис Г., Молот Ведьм, СПб., Амфора, 2005.
47. Штейнпресс Б., Популярный очерк истории музыки до 19 в., М., 1963.
48. Штекли А. Е., “Город Солнца”: утопия и наука, М., 1978.
49. Штекли А. Е., Кампанелла, М., 1959, 1960, 1966.
50. Штекли А. Е., Галилей, М., 1972.
51. Фуко М., Слова и вещи. Археология гуманитарных наук, СПб, 1994.
52. Юренева Т. Ю., Музееведение, М., 2006.
53. Brucker G., Living on the Edge in Leonardo's Florence, University of California Press, 2005.
54. Hauser A. Social History of Art, vol. 2, Taylor and Francis Routledge, 1999.
55. Mazocco A., ed., Interpretations of Renaissance Humanism, Brill, Leiden – Boston, 2006.
56. Muir E., The Cultural wars of the Late Renaissance, Harvard University Press, 2007.
57. Siraisi N. G., Medieval and Early Renaissance Medicine, The University of Chicago Press, 1990.
58. Von Martin A. Sociology of Renaissance, London, 1944.

## **Նոր Դար**

### **Պարտադիր`**

1. Սարգսյան Ա., Նոր ժամանակի մշակույթը Եվրոպայում, Ե., 2004:
2. Ֆուկո Մ., Հսկել և պատժել, Ե., ԱևՄ, 2003:
3. Бродель Ф., Материальная цивилизация, экономика и капитализм, XV – XVIII вв., в 3-х томах, М., 1986-1990.
4. Зомбарт В., Буржуа, М., Терра, 2009.
5. Лахман Р., Капиталисты Поневолле, М., Территория будущего, 2010.

6. Хобсбаум Э., Нации и национализм после 1789, г. СПб., Алетейя, 1998.
7. Элиас Н., О процессе цивилизации, М., СПб, 2001.
8. Элиас Н., Придворное общество, М., 2002.
9. Burke P., Popular Culture in Early Modern Europe, Harper Torchbooks, 1978.

### **Լրացուցիչ`**

1. Ս. Սողոմոնյան, Շրտաշահմանյան գրականություն, Ե., 1979:
2. Арьес Ф., Ребенок и семейная жизнь при Старом порядке, Екатеринбург, Изд-во Урал. ун-та, 1999.
3. Бахтин М. М., Проблемы поэтики Достоевского, М., 1972.
4. Ванслов В., Эстетика романтизма. М., 1966.
5. Вельфлин Г., Ренессанс и Барокко, Санкт-Петербург, “Азбука-классика”, 2004.
6. Вебер М., Избранное. Образ общества. М., 1994.
7. Габитова Р. М., Эстетика немецкого романтизма, 2000.
8. Габович М., Многоликий либерализм. XIX век и современный взгляд на “национальные особенности”, Неприкосновенный запас, 2002, №3 (23).
9. Дасса Ф., Барокко. Архитектура между 1600-1750 г., М., Астрель – Аст, 2002.
10. Де Крюи П., Охотники за микробами. Борьба за жизнь. М., 1987.
11. Дмитриева Н., Краткая история искусств, М., 2004.
12. Дэвис Н., История Европы, М., 2006.
13. История зарубежной литературы XIX в., М., 1970.
14. История зарубежного театра, М., 1984.
15. История философии в кратком изложении, М., 1991.
16. Кабанес О., Насс Л., Революционный Невроз, М., 1998.
17. Карлейль Т., Французская революция. История, М., Мысль, 1991.

18. Керам К. В., Боги, гробницы, ученые, М., Наука, 1986.
19. Кожина Е., Романтическая битва, М., 1969.
20. Комеди Франсез, сборник статей, Л., 1980.
21. Кузнецов Б. Г., Эволюция картины мира, М., 1961.
22. Латур Б., Нового времени не было. Эссе по симметричной антропологии, СПб, Изд-во Европейского Университета в Санкт-Петербурге, 2006.
23. Лотман Ю. М., Беседы о русской культуре, М., 1994.
24. Лотман Ю. М., Сюжетное пространство русского романа XIX столетия // Лотман Ю. М., В школе поэтического слова: Пушкин. Лермонтов. Гоголь. М.: Просвещение, 1988.
25. Мишле Ж., Ведьма. Женщина. М., 1997.
26. Монтанари М., Голод и изобилие, история питания в Европе, СПб, Александрия, 2009.
27. Музыкальная эстетика западной Европы XVII-XVIII вв., М., 1971.
28. Мякова Е. М., Непостижимая Вандея, Французский ежегодник, М., 2003.
29. Ортега-и-Гассет Х., Дегуманизация искусства. Восстание масс, М., 1991.
30. Проблема стилей в западноевропейском искусстве, М., 1968.
31. Реизов Б., Между классицизмом и романтизмом, Л., 1962.
32. Реизов Б., Французский роман XIX в., М., 1969.
33. Русский и западно-европейский классицизм. Проза, сборник статей, М., 1982.
34. Ступникова А., Английский театр XVIII в., М., 1980.
35. Тураев С. В., От просвещения к романтизму, М., Наука, 1983.
36. Успенский Б. А., Семиотика истории. Семиотика культуры // Избранные труды, т. 1, М., 1994.
37. Фуко М., История безумия в классическую эпоху. СПб, 1997.

38. Фуко М., Рождение клиники, М., Смысл, 1998.
39. Фуко М., История сексуальности. В 3-х томах. М., 1996-1998.
40. Фуко М., Слова и вещи. Археология гуманитарных наук, СПб, 1994.
41. Хейзинга Й., Homo Ludens, М., 1992.
42. Хобсбаум Э., Век революций, Ростов на Дону, Феникс, 1999.
43. Шпенглер О. Закат Европы. Опыт морфологии мировой истории. Т.1-2. 1993-1998.
44. Штейнпресс Б., Популярный очерк истории музыки до 19 в., М., 1963.
45. Юренева Т. Ю., Музееведение, М., 2006.
46. Allan D. Commonplace books and reading in Georgian England, Cambridge, Cambridge University Press, 2010.
47. Burke P. Varieties of cultural History, Cornell University Press, 1997.
48. Burke P. Languages and Communities in Early Modern Europe, Cambridge University Press, 2004.
49. Collins J. B., Taylor R. L (eds), Early Modern Europe: issues and interpretations, Blackwell Publishing, 2006.
50. Darnton R. The great cat massacre and other Episodes in French cultural history, Basic books, 1999.
51. Dewald J. Aristocratic experience and the origins of modern culture, University of California press, 1993.
52. Feher F. (ed.) The French revolution and the birth of Modernity, University of California Press, 1990.
53. Merriman J. M. The margins of city life. Explorations on the French Urban Frontier 1815-1851, New York, Oxford, Oxford Univeristy Press, 1991.

## **Բովանդակություն**

Դասընթացի նպատակը .....	3
Դասընթացի կառուցվածքը, մեթոդոլոգիան ու թեմաների նկարագրությունը.....	4
Թեմաների բովանդակությունը	
Վերածննդի դարաշրջան.....	5
Նոր դարի մշակույթ .....	12
Գործնական պարապմունքների թեմաներ .....	22
Հարցեր կրկնության և ստուգման համար .....	23
Գրականություն .....	31



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ  
ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՆ**

**Վերածննդի և Նոր դարի  
Եվրոպայի մշակույթի  
պատմություն**

***Դասընթացի ծրագիր***

Կազմող՝

ԵՊՀ պատմության ֆակուլտետի  
մշակութաբանության ամբիոնի ասիստենտ  
պ.գ.թ. **Յու. Յու. Անտոնյան**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 2,5:  
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալ. Մանուկյան 1